ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

------ ---------- 2019 թ. № -Ա

ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ
ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ
ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի № 450-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի ու 6-րդ և 7-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ հետևյալ քաղաքացիներին.

**1) մինչև 2020 թվականի ամառային զորակոչը՝**

ա) Արտեմ Արթուրի Կարապետյանին (ծնված՝ 1994 թվականի հոկտեմբերի 1-ին, հաշվառման հասցեն՝ քաղ. Երևան, Խանջյան 27),

**2) մինչև 2021 թվականի ամառային զորակոչը՝**

ա) Արթուր Աշոտի Միրանյանին (ծնված՝ 1995 թվականի դեկտեմբերի 27-ին, հաշվառման հասցեն՝ ք. Երևան, Խանջյան 27),

բ) Գաել Պոլ Ֆիլիպի Անդոնյանին (ծնված՝ 1995 թվականի փետրվարի 7-ին, հաշվառման հասցեն՝ քաղ. Երևան, Խանջյան 27),

գ) Էդգար Ալիխանի Բաբայանին (ծնված՝ 1995 թվականի հոկտեմբերի 28-ին, հաշվառման հասցեն՝ քաղ. Երևան, Խանջյան 27),

դ) Գրիգորի Ալբերտի Էմեքսուզյանին (ծնված՝ 1998 թվականի հուլիսի 19-ին, հաշվառման հասցեն՝ քաղ. Երևան, Խանջյան 27),

ե) Հրաչիկ Արայիկի Գևորգյանին (ծնված՝ 1998 թվականի հուլիսի 24-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, գ. Քաղցրաշեն, Մ. Նալբանդյան փող., տուն 22),

զ) Մարկ Տարոնի Գրիգորյանին (ծնված՝ 1998 թվականի հուլիսի 18-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Մարտունի, Գ. Նժդեհի փող., շ. 9, բն. 39),

է) Հայկ Ալեքսանդրի Գալստյանին (ծնված՝ 1998 թվականի մարտի 23-ին, հաշվառման հասցեն՝ քաղ. Երևան, Խանջյան 27),

ը) Սարգիս Սերոբի Մարտիրոսյանին (ծնված՝ 2001 թվականի հունվարի 18-ին, հաշվառման հասցեն՝ քաղ. Երևան, Խանջյան 27),

թ) Գերման Իշխանի Կուրբաշյանին (ծնված՝ 2000 թվականի հուլիսի 15-ին, հաշվառման հասցեն՝ քաղ. Երևան, Խանջյան 27),

ժ) Երջանիկ Խաչատուրի Ղուբասարյանին (ծնված՝ 2001 թվականի փետրվարի 21-ին, հաշվառման հասցեն՝ քաղ. Երևան, Խանջյան 27),

**3) մինչև 2022 թվականի ամառային զորակոչը՝**

ա) Անատոլի Աշոտի Այվազովին (ծնված՝ 1996 թվականի հունիսի 8-ին, հաշվառման հասցեն՝ քաղ. Երևան, Խանջյան 27),

բ) Դանիել Իհսանի Օզբիլիզին (ծնված՝ 1997 թվականի ապրիլի 29-ին, հաշվառման հասցեն՝ քաղ. Երևան, Խանջյան 27),

գ) Ալեքսանդր Անդրանիկի Հովհաննիսյանին (ծնված՝ 1996 թվականի հուլիսի 20-ին, հաշվառման հասցեն՝ քաղ. Երևան, Խանջյան 27),

դ) Հովհաննես Էդուարդի Պողոսյանին (ծնված՝ 1997 թվականի դեկտեմբերի 17-ին, հաշվառման հասցեն՝ ք. Երևան, Խանջյան 27):

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
# «ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող մի շարք քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշմամբ ներկայացված քաղաքացիներին, որոնք հանդես են գալիս ֆուտբոլի Հայաստանի Հանրապետության ազգային հավաքական թիմերում, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով տարկետում է տրվել մինչև 2019 թվականի ամառային զորակոչը, և անհրաժեշտություն է առաջացել երկարաձգելու նրանց տարկետման ժամկետը:

- Արտեմ Կարապետյանի, Արթուր Միրանյանի, Դանիել Օզբիլիզի և Գաել Պոլ Անդոնյանի տարկետման ժամկետը Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 31-ի № 1068-Ա որոշմամբ երկարացվել է մինչև 2019 թվականի ամառային զորակոչը: Անհրաժեշտություն է առաջացել երկարաձգելու Արտեմ Կարապետյանի տարկետման ժամկետը մինչև 2020 թվականի ամառային զորակոչը, Արթուր Միրանյանի և Գաել Պոլ Անդոնյանի տարկետման ժամկետը մինչև 2021 թվականի ամառային զորակոչը, իսկ Դանիել Իհսանի Օզբիլիզինը՝ մինչև 2022 թվականի ամառային զորակոչը:
- Հրաչիկ Գևորգյանին, Մարկ Գրիգորյանին, Հայկ Գալստյանին և Ալեքսանդր Հովհաննիսյանին տարկետում է տրվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի № 173-Ա որոշմամբ, և անհրաժեշտություն է առաջացել երկարաձգելու Հրաչիկ Գևորգյանի, Մարկ Գրիգորյանի, Հայկ Գալստյանի տարկետման ժամկետը մինչև 2021 թվականի ամառային զորակոչը, իսկ Ալեքսանդր Հովհաննիսյանի տարկետման ժամկետը մինչև 2022 թվականի ամառային զորակոչը:
- Անատոլի Այվազովին, Հովհաննես Պողոսյանին և Գրիգորի Էմեքսուզյանին տարկետում է տրվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 22-ի № 1332-Ա որոշմամբ, և անհրաժեշտություն է առաջացել երկարաձգելու Անատոլի Այվազովի և Հովհաննես Պողոսյանի տարկետման ժամկետը մինչև 2022 թվականի ամառային զորակոչը, իսկ Գրիգորի Էմեքսուզյանի տարկետման ժամկետը մինչև 2021 թվականի ամառային զորակոչը:
- Սարգիս Մարտիրոսյանին, Գերման Կուրբաշյանին, Երջանիկ Ղուբասարյանին և Էդգար Բաբայանին անհրաժեշտ է տարկետում տալ մինչև 2021 թվականի ամառային զորակոչը:

Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերում ընդգրկված լավագույն մարզիկների պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալը կնպաստի սպորտի բնագավառի բնականոն գործունեությանը և բարձր մարզական արդյունքների ձեռքբերմանը: Սույն որոշման նախագիծը կազմված է՝ ելնելով վերոհիշյալից և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի № 450-Ն որոշման 5-րդ կետի պահանջները:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող մի շարք քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի ու եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՈՐՄԱՏԻՎ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող մի շարք քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ նորմատիվ այլ իրավական ակտերի ընդունման կամ գործող իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չկա:

| ԱՄՓՈՓԱԹԵՐԹ<br>«ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»<br>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ<br>ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ | | | |
|---|---|---|---|
| ***Հ. հ.*** | ***Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը և համարը*** | ***Առաջարկության բովանդակությունը*** | ***Եզրակացություն*** | ***Կատարված փոփոխությունը*** |
| *1* | *2* | *3* | *4* | *5* |
| 1. | ՀՀ պաշտպանության նախարարություն<br><br>11.06.2019 թ.<br>№ ՊՆ/510/839-2019 գրություն | 2019 թվականի մայիսի 8-ի Սպորտի նախարարության N 1/06/627-19 գրությամբ ներկայացված «Սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող մի շարք քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին»> ՀՀ կառավարության որոշման նախագծի քննարկման արդյունքներով հայտնում եմ, որ ներկայացված թվով 15 քաղաքացիների կարգավիճակը համապատասխանում է ՀՀ կառավարության 12.04.2018թ. N 450-Ն որոշմամբ սահմանված կարգի 5-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի ու 6-րդ (մասնակի) և 7-րդ կետերի համաձայն սպորտի բնագավառում որպես նշանակալի նվաճումներ ունեցող անձանց տարկետում տրամադրելու իրավունքին:<br>Հայտնում եմ նաև, որ՝<br>1. նախագծի նախաբանում «4-րդ ենթակետի ու 6-րդ | Ընդունվել է: | Կատարվել են համապատասխան փոփոխություններ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | կետի» բառերը անհրաժեշտ է փոխարինել «3-րդ և 4-րդ ենթակետերի ու 6-րդ և 7-րդ կետերի» բառերով,<br>2. Գրիգորի Էմեքսուզյանին (ծնվ. 19.07.1998թ., Երևանի N 2 ԶԿ), Հրաչիկ Գևորգյանին (ծնվ.՝ 24.07.1998թ., Արարատի մարզի ԶԿ), Մարկ Գրիգորյանին (ծնվ.՝ 18.07.1998թ., Գեղարքունիքի մարզի ԶԿ), Հայկ Գալստյանին (ծնվ.՝ 23.03.1998թ., Երևանի N 2 ԶԿ), Սարգիս Մարտիրոսյանին (ծնվ.՝ 18.01.2001թ., Երևանի N 2 ԶԿ), Գերման Կուրբաշյանին (ծնվ.՝ 15.07.2000թ., Երևանի N 2 ԶԿ) և Երջանիկ Ղուբասարյանին (ծնվ.՝ 21.02.2001թ., Երևանի N 2 ԶԿ) տարկետում կարող է տրամադրվել առավելագույնը մինչև 2021թ. ամառային զորակոչը, քանի որ ֆուտբոլի պատանեկան և երիտասարդական ազգային հավաքականների մարզիկներին տարկետումը տրվում է մինչև երկու տարի ժամկետով: | | |
| 2. | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>08.07.2019 թ.<br>№ 01/27.1/14556-2019 գրություն | Նախագծի կետերի և ենթակետերի համարակալումն անհրաժեշտ է վերանայել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջները: | Ընդունվել է: | Կատարվել են համապատասխան փոփոխություններ: |